

7938



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

«17» 07 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 131 - 24

Նախաձեռնող՝

«ՌԻԴ» ՍՊԸ  
ք. Երևան, Կենտրոն, Ձորագյուղ 35

Գործունեությունը՝

Նոր Արմավիր բնակավայրում գինու  
և խաղողի վերամշակման գործարանի կառուցում  
Արմավիրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 131 - 24

«17» հուլիսի 2024թ.

**Նոր Արմավիր բնակավայրում գինու և խաղողի վերամշակման գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝ «ՌԻԴ» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
Տեղադրման վայրը՝ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նոր Արմավիր բնակավայր

**Ներածական մաս.** «ՌԻԴ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրում Մ. Մաշտոցի փողոց 30 և 30/1 հասցեներում հիմնել խաղողագինեգործության համալիր:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից տեխնոլոգիաներով հագեցած գինու և խաղողի վերամշակման տնտեսության գործարան:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման 17082022-04-0049 և 17082022-04-0031 վկայականները, Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի կողմից 05.01.2023թ. տրամադրված N 03 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

**Նկարագրական** Հողամասը, որտեղ նախատեսված է իրականացնել հիմնական կառուցապատումն ազատ է շենք-շինություններից: Հողամասն բաղկացած է երկու հատվածներից՝ ընդհանուր մակերեսը կազմում է 9.6012 հա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը գտնվում է մարտարան



միջլեռնային գոգահովիտի սահմաններում՝ բլրակի վրա, որտեղ բացարձակ նիշերը տատանվում են 885-900 մ.-ի սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքում վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթներն ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Տեղամասում մինչև 15 մ խորության հորատանցքերով ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող գործունեության տարածքում Կարմիր գրքյան տեսակներ չեն հայտնաբերվել, բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Համալրիչ տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի մակերեսը – 96012 քմ,
- կառուցապատման մակերեսը – 4123.20 քմ (4,29 %),
- կանաչ ծառատունկեր – 3131,45 քմ (3,26 %),
- տոմետ – 2198,85 քմ (2,29 %),
- Սիզամարգեր – 729,83 քմ (0,76 %),

Կոշտ ծածկույթներ

- ասֆալտաբետոն 8867,0 քմ (9,24%),
- տոմետ – 7104,78 քմ (7.4 %),
- մրգատու այգի – 13621,3 քմ (14.2%),
- խաղողի այգի- 47135,46 (49.1 %),
- ջրային մակերևույթ- 7684,43 քմ (8 %),
- օժանդակ կառույցներ – 1415,7 քմ (1.46 %),

Հարկայնությունը – 3 հարկ՝ կիսաստորգետնյա հարկ – 3013.62 քմ, վերգետնյա – 2 հարկ

Կառուցապատվող հողատարածքը շրջապատված է խաղողի և մրգատու այգիներով, վարելահողերով:

Գործունեության տարածքը գտնվում է բնակավայրերից ավելի քան 500 մ հեռավորության վրա, ինչն ամրագրված է նաև համայնքի կողմից տրամադրված տեղեկանքով:

Շինությունը նախատեսված է երկհարկանի՝ մանսարդով և նկուղային հարկով:

Տնտեսությունը բաղկացած կլինի՝ վերամշակման արտադրամասից, տեխնիկական սարքավորումների համար տարածքներից, սրահներից, պահեստային, գրասենյակային տարածքներից, անձնակազմի համար կացարանից, պահակակետից:

Գործարանի հզորությունը տարեկան կկազմի 50 հազար շիշ, 6000 դեկալիտր, կամ 16,7 դեկալիտր/օր:

Գինու արտադրությունը ներառում է երկու հիմնական փուլ՝ արտադրության պահանջներին բավարարող բարձրորակ խաղողի ստացում և տվյալ խաղողից գինու պատրաստում: Խաղողի վերամշակումը կիրականացվի նուրբ մեխանիկական ռեժիմով: Գինու արտադրության տեխնոլոգիան իր մեջ ներառում է գրտնակային և թիակավոր ջարդիչ-չանչանջատիչներ: Չանչերի անջատումից հետո փլուշի տեղափոխում մամլիչ, խմորումից առաջ քաղցուի պարզեցում, առանձնացում նստվածքից և այլն:

-4.50 նիշում գտնվող մասնաշենքի կենտրոնական հատվածը նախատեսվում է երկհարկանի՝ մանսարդային հարկով: աջ և ձախ թևերում նախագծված արտադրամասը և ցուցասրահը՝ երկողմանի լուսավորությամբ: Նշված մասնաշենքին հողմիայաց կենտրոնական առանցքի աջ և ձախ կողմերում նախատեսվում է եռահարկ կառույցներ:



Կառույցների ստորին հարկերն ամբողջովին կգտնվեն գետնի տակ, որոնք նախատեսված են պահեստային և օժանդակ սենյակների համար: Երկու վերգետնյա հարկերում նախատեսված են գրասենյակային տարածքներ:

Մասնաշենքերը միմիանց հետ կկապվեն բացօթյա սրահներով, որոնց միջոցով համալիրի կենտրոնական մասի վերգետնյա հատվածում կլինի ներքին բակ:

Մեքենաների մուտքը և ելքը նախատեսված է դեպի համալիր տանող երկու ներքին ճանապարհների միջոցով, կայանատեղին՝ կառույցի հյուսիս-արևմտյան մուտքի առջևի հարթակում:

Հրշեջ մեքենաների մուտեցումը դեպի նախատեսվող կառույցի տարածք ապահովված կլինի բոլոր կողմերից, տարածքում կնախատեսվի նաև մինչև 15000 խմ ծավալով, 2-2.2 մ խորությամբ հակահրդեհային ավազան, որտեղ ջուրը կուտակելուց հետո կօգտագործվի նաև ոռոգման նպատակով:

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրականացվի հիմքերի փորման աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար կկատարվի մոտ 64913 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ, հանվող 17940 խմ ծավալով բուսահողը կպահվի՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, 17650 խմ ծավալը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, իսկ մնացած մասը՝ 29323 խմ, կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր:

Տնտեսության շենքերի էլեկտրաֆիկացման և էլեկտրամատակարարման համար նախատեսվում է տեղադրել 400 ԿՎԱ հզորությամբ սեփական տրանսֆորմատորային ենթակայան, որի էլեկտրական հզորությունը կապահովի խաղողի վերամշակման համար օգտագործվող սարքավորումների կարիքները, աշխատողների աշխատանքի և կեցության հարմարավետ պայմանների ստեղծումը և տնտեսության կենսագործունեության ապահովման հետ կապված հետևյալ սարքավորումների աշխատանքները (կաթսայատների, պոմպային համակարգերի, մաքրման կայանների, օդի հովացման Սպլիտ համակարգերի և այլն):

Տնտեսության տարածքում շենքերի ջեռուցումն ու ջերմամատակարարումը կիրականացվի կաթսայատանը տեղադրվող գազի կաթսայի սարքավորումների միջոցով: Կաթսայատանը նախատեսված է տեղադրել 4 հատակային ջրատաքացուցիչ կաթսաներ (երկու՝ Vitoplex 200 SX2A՝ Vitotronic 300 CM1 վերահսկիչով և երկու Vitoplex 200 SX2A՝ Vitotronic 100 CC1 վերահսկիչով կոմբինացված միակոնտուր կաթսաներ): Կաթսայատան օդափոխության համար հախատեսված են ճաղաշարեր՝ սենքի դռների և պատուհանների վերին հատվածներում օդի բնական ներածման համար, և դեֆլեկտորներ՝ կաթսայատան ավելցուկ օդի բնական հեռացման համար այդ թվում նաև վթարային ջրահեռացման համակարգ՝ առվակների և դրենաժային փոսերի միջոցով:

Խաղողի վերամշակումից կենցաղային կոյուղաջրերի և արտադրական կեղտաջրերի հավաքումը նախատեսվում է ներբակային ցանցի միջոցով:

Շինությունում նախատեսված է իրականացնել կենցաղային կոյուղու, տեխնիկական ջրահեռացման և արտադրական ջրահեռացման համակարգեր:

Հիմնական խողովակաշարերում խցանումներից խուսափելու համար, արտադրական ջրերի (թորանքի) հեռացման համար նախատեսված է առանձին ջրահեռացման համակարգ:

Արտադրական կարիքների համար ջուրն օգտագործվում է խաղողի վազման, ճզմաքամման, շշերի, սարքավորումների, տարողությունների վազման համար: Նշված նպատակներով ջրօգտագործումը կազմում է 3626,6 խմ/տարի: Կոմունալ կենցաղային հոսքաջրերի քանակը հաշվարկված է 1565 խմ/ժամ:



Համաձայն հայտի կեղտաջրերի խորքային մաքրման համար նախատեսված են «Էկո լայֆ» ԲԲԸ Դիամանտ մակնիշի 4 մաքրման կայաններ՝ (կայանը ապահովում է 92-98% մաքրման ցուցանիշ): Կայանները նախատեսված են գինու տնտեսության յուրաքանչյուր շենքի համար առանձին-առանձին: Պահակատան համար նախատեսված է 0.7 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ, անձնակազմի կացարանի համար՝ 3.0 մ<sup>3</sup>/օր, գլխավոր մասնաշենքի կոմունալ կենցաղային հոսքաջրերի համար՝ 50 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ և գլխավոր մասնաշենքի արտադրական կեղտաջրերի համար՝ 15 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ մաքրման կայաններ:

Ջրահեռացման վայրը և թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները, մաքրման գործընթացից հետո մաքրված ջրերի հեռացումը կիրականացվի ՇՄ նախարարության կողմից 2024թ.փետրվարի 2-ի տրված N081 ջրօգտագործման թույլտվության համաձայն:

Կեղտաջրերի մաքրման կայանների նստվածքները, որոնք վերածվում են պարարտանյութի, կօգտագործվի գյուղատնտեսության մեջ, պարարտացման համար:

Անձրևաջրերի ջրահեռացումը նախատեսվում է ներծծող հորերում՝ մասնակի կամ (ամբողջական) օգտագործման հնարավորությամբ տնտեսության տարածքում կանաչ տարածքների ոռոգման և ոռոգման համար դրա մասնակի կամ (ամբողջական) օգտագործման հնարավորությամբ:

Շինության արտադրական նշանակության սենքերի օդափոխությունն կիրականացվի մեխանիկական դրդմամբ, սարքավորումներն ընտրված են ըստ սենքերի արտադրական և գործառնական նշանակությունների: Օդափոխության՝ ներածման-արտածման սարքեր նախատեսվում է տեղադրել արտադրության պահպանման, պատրաստի արտադրանքի պահեստի, նախասրահում և միջանցքներում, տեխնիկական սենքի և շշալցման սենքերում, թորման արտադրամասում և արտադրական սենքում, համոտսման սրահում և արտադրական լաբորատորիայում, պարենամթերքի պահեստներում և սանհանգույցներում, ցուցասրահում, խոհանոցներում, օդափոխության համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը առավել մանրամասն տրված է հայտի համապատասխան բաժնում:

Գազամատակարարումը 154 խմ ժամ ծախսով, շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 400 կՎա հզորությամբ կիրականացվեն համաձայն տեխնիկական պայմանների:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման, բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են՝

- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,



- վառելիք արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանան հետևյալ թափոնատեսակները՝ կենցաղային աղբը, ինչն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, որը կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը, որոնք կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին: Ենթակայանի հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով կիրականացվի բետոնյա հարթակը, որը կունենա թեքություն որտեղ էլ կկուտակվի յուղը, կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

Խաղողի վերամշակման տնտեսության շահագործման փուլում կառաջանա գինեգործության նստվածքներ տարեկան մոտ 4200 կգ, որը կօգտագործվի որպես պարարտանյութ:

Թափոնների ծավալների, վտանգավորության դասի, ծածկագրերի, նախատեսվող բնապահպանական միջաջառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նախնական գնահատման հայտում:

Նախատեսված է շենքի շրջակայքը բարեկարգել և կանաչապատել, ներքին բակերում նախատեսված են սիզամարգեր և սալապատում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, մեղմելու նպատակով նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

1. Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականցում,

- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը:

2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են.

- ջրցանի ծավալների այնպեսի հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի և անվաղողերի լվացումից առաջացող հոսքերի ուղղորդում 25 խմ ծավալով տարողություն պլաստմասե պարզարան, որը նախատեսվում է շինարարական հրապարակին կից, որում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3. Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքա-



վորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավվում,

- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած շինարարական թափոնների տեղափում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

- տարածքում առկա հողի բերրի շերտի պահպանում՝ առաջնորդվելով Կառավարության Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշման համաձայն: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկման և լիցքավորման իրականացում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են նաև արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն, որոնց հնարավոր ազդեցությունների բացառման, նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք միջոցառումները, նախատեսված են նաև կենսաբազմազանության պահպանությանը, արտակարգ իրավիճակների պատրաստվածությանը, աղմուկի և թրթռումների ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումներ, որոնք տրված են հայտի համապատասխան բաժիններում:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով՝ տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 3720000 ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:



Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Ապահովել տարածքի կանաչապատման աշխատանքներ իրականացումը:
3. Ապահովել գործունեության և շահագործման ընթացքում առաջացող թափոնների հավաքումը, փոխադրումը, պահանումը, հեռացումը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
4. Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
5. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՌԻԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրում գինու և խաղողի վերամշակման գործարանի կառուցման միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան